ԿՈՉՆԱԿ
ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏՈՒԹՅԱՆ

90

8 Նոյեմբերի 2009թ.

Ուխտագնացություն դեպի Բեյրութ

Ռուսաստանի հայ կաթողիկե համայնքի մի փոքրիկ խմբով (6 հոգուց բաղկացած) մեկնեցինք Բեյրութ երկու նպատակով.

1)մասնակցելու Ս. Գրիգոր Նարեկացուն նվիրված միջազգային խորհրդաժողովի նիստերին,

2)մասնակցելու Ս. Մյուռոնի օրհնության արարողությանը:

Մեր ինքնաթիռը վայրէջք կատարեց Բեյրութի օդանավակայանում կեսգիշերին: Բեյրութը քնած չէր, կարծես սպասում էր մեզ, ցերեկվա նման եռուզեռ էր: Մոսկվայի անձրևային, տաղտուկ եղանակին փոխարինեց Բեյրութի շոգ եղանակը: Հայր Գևորգը տանտիրոջ իրավունքով մեզ դիմավորեց շատ ջերմ ու մինչև հյուրանոց հասնելը ճանապարհին մեզ ծանոթացրեց գիշերային Բեյրութի հետ, ու նաև տեղի ունեցավ մեր առաջի թեթև ծանոթությունը բեյրության խոհանոցի հետ: Ապա եկանք հյուրանոց ու տեղավորվեցինք:

Ամեն երեկո ներկայացվում էր հաջորդ օրվա պլանը՝ սկսած նախաճաշի ժամից:

Այցելեցինք Մեսրոպյան վարժարան: Շատ մեծ հաստատություն է, սաները՝ մանկամսուրային տարիքից սկսած մինչև մասնագետ դառնալը. մանկամսուր, մանկապարտեզ, դպրոց, համալսարան: Ամեն ինչ հայերեն էր. հայ աչքեր, հայ լեզու, հայկական ոգի և ... համախմբվածություն: Վարժարանի տնօրենը պատմեց վարժարանի գործունեության, ձեռք բերած հաջողությունների մասին, շրջեցինք վարժարանի դասասենյակներում, եղանք մանկամսուրում, մանկապարտեզում: Վարժարանի հիմնադրման և զարգացման գործում մեծ դեր է ունեցել մեծ հայրենասեր, գրականագետ, վարդապետ Գրիգոր Եղիայանը՝ սկսած վարժարանի շինարարությունից, վերանորոգումից տեխնիկապես հարստացումից մինչև կրթադաստիարակչական անձնակազմի ձևավորումը: Վարժարանի ներկայիս տնօրենն է Ահարոն Գրեգուար Գալուստը, որը ևս շարունակում է վարժարանի ծաղկեցման ու բարգավաճման աշխատանքները: Մեր այցելության ավարտին երեխաների ու տնօրենի հետ լուսանկարվեցինք ս.Մաշտոցի հուշարձանի մոտ: Հուշանվերներ ստացանք ու դուրս եկանք վարժարանից մտքերով, որ եթե ամեն տեղ, որտեղ հայ կա, լինի այսպիսի համախմբվածություն, երևի ոչ մի փակ դուռ չի մնա հայի համար, և հայի ճակատագիրը այլ կլիներ: Նման մտահոգություններ տեսանք «Մասիս» շաբաթաթերթի պատասխանատու խմբագիր հայր Անդրանիկ Կռանեանի մոտ, ուր այցելեցինք ուրբաթ օրը: Ինչ անհանգստություն, ինչ ապրումներ, ինչ մտահոգություններ Հայաստանի մասին:

Անգամ ընթրիքի ժամանակ նրա գլխում նույն միտքն էր՝ հայի ճակատագիրը:

Ապա այցելեցինք «Ազդակ» հայկական օրաթերթի խմբագրություն, «Սևան» ռադիոկայանի խմբագրություն: Ամէնուրեք մեզ ընդունում էին շատ ջերմ, մանրամասն ներկայացնում էին իրենց գործունեությունը, խնդիրները և հաջողությունները:

Կեսօրից հետո ծանոթացանք Բեյրութ քաղաքի կենտրոնի հետ:

Չորեքշաբթի առավոտյան ֆրանսահայերի խմբի հետ այցելեցինք Բաալբեքի՝ երկրաշարժի հետևանքով ավերված տաճարը, որը գտնվում է ծովի մակերևույթից 1170մ բարձրության վրա: Ծանոթացանք նրա կառուցման պատմությանը: Տպավորությունները մեկ-երկու բառով նկարագրել անհնարին է:Ահռելի չափեր ու հարյուրավոր տոննաներ կշիռ ունեցող քարերը բարձրացնել, կառուցել պատմության այդ վաղ շրջանում նման տաճար առանց տեխնիկայի...Անհնար է, դա մարդկային կարողություններից վեր է:

Բաալբեքից հետո շարժվեցինք դեպինԱյնճար՝ զուտ հայաբնակ գյուղավան: Տեղի հայերից մեկը մեզ պատմեց Մուսա լեռնցիների մասին:

Իսկ չորեքշաբթի երեկոյան ներկա գտնվեցինք Ս. Գ. Նարեկացու խորհրդաժողովի փակման կապակցությամբ պատրիարքարանի «Կռունկ» երգչախմբի տված համերգին:

Հաջորդ այցելությունը եղավ աշխարհի յոթ հրաշալիքների թեկնածու Ժբիթայի քարայրը,որը բաղկացած է երկու հարկից՝ ներքին և վերին՝ 1350մ երկարությամբ:Սկզբից բարձրացանք երկրորդ հարկ: Երկար կամրջով անցանք քարայրի միջով: Այստեղ, առավել ևս, խոսքերն ավելորդ են: Ինչ է արել ջուրը, պատկերացնելն իսկ դժվար է: Այո, իզուր չի ասված, բնությունը ինքն է առաջի քանդակագործը:Իսկ երբ իջանք առաջի հարկ, փոքրիկ նավակներով շրջապտույտ կատարեցինք, լսեցինք ջրային կաթիլների կաթկթոցի ու «ջրի ձայնը», որոնք իրար միանալով ու հաջորդելով միմյանց վերածվում էին երաժշտության, ակամայից մտածում ես, երևի առաջի երգահանը ևս բնությունն է:

Երեկոյան այցելեցինք պատրիարքարան, ծանոթացանք հոգևոր առաջնորդների հետ, շրջեցինք վերանորոգված շենքի հարկերում, իսկ վերջում մասնակցեցինք ժողովի՝ անհնար է ջնջել Հայաստանը:

Հաջորդ արավոտյան այցելեցինք հայ առաքելական պատրիարքարան, հարգանքի տուրք մատուցեցինք ցեղասպանության զոհերի հիշատակին: Եղանք պատրիարքարանի թանգարանում, գրախանութում: Ունեցանք հանդիպում ամբողջ հայ կաթողիկե համայնքի առաջնորդ կաթողիկոս պատրիարք Ներսես Պետրոս 19-ի հետ Զմմառի վանքում: Ամեն մեկիս հետ անհատական ծանոթացավ,

խմբի կողմից հանձնվեցին հուշանվերներ, պատրիարքի ձեռքից հայր Գևորգն ստացավ պարգև՝ կատարած աշխատանքների համար, իսկ մեզ հանձնեց վարդարան:

Եղանք Զմմառոի դպրեվանքում՝ հայր Գևորգի նախկին աշխատատեղում, ուր հայր Գևորգը հայր Նարեկի հետ միասին ծանոթացրին դպրեվանքի գործունեությանը, եղանք գրադարանում, թանգարանում, ծանոթացանք հին ձեռագրերի ու նրանց հետ կատարված աշխատանքների հետ, որոնք նպաստելու են այդ ձեռագրերը սերնդե-սերունդ փոխանցելու գործին:

Այցելեցինք Ս. Խաչ եկեղեցին, ծանոթացանք նրա պատմության հետ, իսկ երեկոյան կողմ շրջեցինք հայահոծ Բուրճ Համուտ քաղաքի շուկայում:

Շաբաթ օրը ֆրանսիական խմբի հետ այցելեցինք Ս. Շարբելի և թանգարան, և վանք, որը գտնվում է 1300մ բարձրության վրա Անայում: Ծանոթացանք նրա կյանքի ու գործունեության պատմության հետ. ինչքան հիվանդներ են բուժվել նրա կենդանության, և, նամանավանդ, նրա մահից հետո: Եվ ինչպես վերջում նրան հռչակել են սուրբ: Հայր Գևորգը մատուցեց սուրբ պատարագ Ս. Շարբելի փոքր վանքում:

Այնուհետև ուղևորվեցինք դեպի Բիշարե՝ լիբանանցի գրող և նկարիչ Ժըբրան Խալիլի տուն թանգարանը և, ապա, մայրիների անտառ, որը գտնվում է ծովի մակարդակից 1700մ բարձրության վրա (Արզ բարձրադիր լեռների վրա): Այստեղ տեսանք ծառեր 1000, 3000տարեկան: Շրջեցինք անտառում, հմայվեցինք կայծակից վնասված ծառերի վրա քանդակված մարդկանց կերպարանքներով: Ուշ երեկոյան տպավորությունների առատության ծանրության տակ վերադարձանք Բեյրութ:

Կիրակի օրը առավոտյան այցելեցինք նորից Մեսրոպյան վարժարան պատանեկան կազմակերպությունների ղեկավարների հետ ծանոթանալու: Եղանք Ս. Փրկիչ եկեղեցում, որից հետո ուղևորվեցինք Ս. Եղիա եկեղեցին՝ մասնակցելու Ս պատարագին և Ս. Մյուռոնի օրհնության արարողությանը, որը մատուցվեց Տանն Կիլիկիո Ներսես Պետրոս 19-րդ կաթողիկոս պատրիարքի կողմից:

Հաջորդ օրը շրջեցինք Բեյրութի առևտրական կենտրոններում, իսկ ուշ երեկոյան ուղևորվեցինք դեպի օդանավակայան:

Վերադարձանք շատ հարուստ տպավորություններով: Գրի առնվածը տեսածի չնչին մասն է կազմում, հնարավոր չէ գրավոր արտահայտել այն, ինչ տեսանք ու զգացինք: Տեսածից կարելի է եզրակացնել հետևյալը. մեծ է հավատը Լիբանանում: Ամենաակնառու փաստը. ամեն բնակարանի պատշգամբում, բակում, ճանապարհների եզերքին, ոլորաններում տեղադրված է Ս. Աստվածամոր արձանը. «Տիրամոր ներկայությունը մեզ փրկում է աղետներից ու փորձություններից»: Այսպես ես ընկալում այս երևույթը: Ժողովուրդը հավատ ունի:

Ու ակամայից հիշում ես հետևյալ խոսքերը. «Տեր, տուր ինձ հավատ, որ ես հավատամ իմ անհավատությանը»...

Շնորհակալություն, հայր Գևորգ, նման ուխտագնացության համար: Այն դեռևս երկար կմնա մեր հիշողություններում: Թող բազմապատկվեն նման ուխտագնացությունները և ավելի մեծ խմբերով:

Մ. Յաղիկարյան

8.11.2009թ.

Եփեսացիներ

5, 15-33

15Տեսէք, թէ ինչպիսի զգուշութեամբ պէտք է ընթանաք. ոչ թէ ինչպէս անմիտներ, այլ՝ ինչպէս իմաստուններ. 16ժամանակն օգտագործեցէ՛ք, քանզի օրերը չար են. 17դրա համար անմիտ մի՛
եղէք, այլ իմացէ՛ք, թէ ի՛նչ է Տիրոջ կամքը: 18Եւ մի՛հարբէք գինով. դրա մէջ զեխութիւն կայ. Այլ մանաւանդ լցուեցէք Հոգո՛վ, 19որպէսզի խօսէք միմեանց հետ սաղմոսներով, օրհներգութիւններով եւ հոգեւոր երգերով, որպէսզի երգէք եւ ձեր սրտերում սաղմոս ասէք Տիրոջը: 20Գոհութի՛ւն յայտնեցէք ամէն ժամ ամէն ինչի համար Հօրը եւ Աստծուն՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունով: 21Հնազանդուեցէ՛ք միմեանց Քրիստոսի երկիւղով: 22Կանայք իրենց մարդկանց թող հնազանդ լինեն, ինչպէս կը հնազանդուեն Տիրոջը, 23որովհետեւ մարդն է գլուխը կնոջ, ինչպէս որ Քրիստոս գլուխն է եկեղեցու. եւ ինքն է Փրկիչը այդ մարմնի: 24Եւ ինչպէս եկեղեցին հնազանդւում է Քրիստոսին, նոյնպէս եւ կանայք թող հնազանդուեն իրենց մարդկանց ամէն ինչում: 25Մարդի՛կ, սիրեցէ՛ք ձեր կանանց, ինչպէս որ Քրիստոս սիրեց եկեղեցին եւ իր անձը մատնեց նրա համար, 26որ սրբացնի աւազանի մաքրութեամբ՝ խօսքով, 27որպէսզի նա իր առաջ փառաւոր կերպով կանգնեցնի եկեղեցին, որ ոչ մի արատ կամ աղտեղութիւն կամ նման բաներից ոչինչ չունենայ, այլ լինի սուրբ եւ անարատ: 28Նոյն ձեւով մարդիկ պարտաւոր են սիրել իրենց կանանց իբրեւ իրենց մարմինները. ով սիրում է իր
կնոջը, ինքն իրեն է սիրում. 29որովհետեւ ոչ ոք երբեք իր անձը չի ատում, այլ սնում
եւ խնամում է այն, ինչպէս որ Քրիստոս՝ եկեղեցին. 30քանզի անդամներն ենք նրա
մարմնի՝ նրա մարմնից եւ նրա ոսկորներից: 31«Դրա համար մարդը պիտի թողնի իր հօրն ու մօրը եւ պիտի գնայ իր կնոջ յետեւից. եւ երկուսը պիտի լինեն մէկ մարմին»: 32Այս խորհուրդը մեծ է. բայց ես ասում եմ Քրիստոսի եւ եկեղեցու վերաբերեալ: 33Դուք էլ նոյնպէս ամէն մէկդ նո՛յնը արէք, որպէսզի իւրաքանչիւր ոք իր կնոջն այնպէս սիրի, ինչպէս իր անձը, եւ կինը երկնչի իր մարդուց: :

Ղուկասի Ավետարան

8, 49-57

49Եւ մինչ նա խօսում էր, ժողովրդապետի տնից մէկն եկաւ

եւ Յայրոսին ասաց. «Աղջիկդ մեռաւ, յոգնութիւն մի՛ պատճառիր դրան»: [50]Իսկ երբ Յիսուս լսեց, նրան պատասխանեց եւ ասաց. «Մի՛ վախեցիր, միայն հաւատա՛, եւ նա կ՝ապրի»: [51]Եւ նրա տունը մտնելով՝ ոչ ոքի չթողեց ներս մտնել, բացի Պետրոսից, Յակոբոսից, Յովհաննէսից եւ երեխայի հօրից ու մօրից: [52]Ամէնքը լալիս եւ ողբում էին նրա վրայ: Եւ նա ասաց. «Լաց մի՛ եղէք, որովհետեւ մեռած չէ, այլ ննջում է»: [53]Իսկ նրանք ծաղրում էին նրան, որովհետեւ գիտէին, որ մեռած էր: [54]Եւ ամենքին դուրս հանելով՝ բռնեց նրա ձեռքից, գոչեց եւ ասաց. «Վե՛ր կաց, կանգնի՛ր, ո՛վ մանուկ»:[55]Եւ նրա հոգին վերադարձաւ, եւ մանուկը իսկոյն կանգնեց: Եւ Յիսուս հրամայեց, որ նրան ուտելու բան տան: [56]Եւ նրա ծնողները զարմացած մնացին, իսկ նա պատուիրեց, որ ոչ ոքի չասեն, ինչ որ եղել էր:

Ս.Մյուռոնի օրհնության արարողությունը Լիբանանում

Հոկտեմբերի 18-ին Բեյրութի կենտրոնում գտնվող ս.Եղիա եկեղեցում տեղի ունեցավ ս.Մյուռոնի օրհնության արարողությունը: Առաջին հերթին ուզում եմ նշել քանդակազարդ եկեղեցու թողած անմոռանալի տպավորության մասին, եկեղեցին, որի հիսունամյակը վերջերս էին նշել, գտնվում էր ռմբակոծությունից ավերված 2 փողոցներին հարակից և կարծես մոխիրներից հառնած Փյունիկ լիներ: Տոնի առիթով զարդարված էր եկեղեցին ինչպես նորահարսը և լեցուն էր հավատացյալներով աշխարհի բոլոր կողմերից: Այստեղ հանդիպեցինք մեր հայրենի գյուղերի հոգևոր առաջնորդներին՝ Անատոլի Իվանյուկ, Անդրեյ Յանիցկի, Հայաստանից հայր Պետրոս Եսայանը և շատ այլ ծանոթ եկեղեցականների: Արարողությունը սկսվեց եպիսկոպոսների թափորի երթով: Կլանված լսում էինք պատարագի երգերն ու շարականները «Կռունկ»հոգևոր երգչախմբի կատարմամբ և կարծես ամեն ինչ նորովի էր մեզ համար: Սուրբ Մյուռոնի օրհնության արարողությունը տեղի է ունենում յոթը տարին մեկ անգամ. Սուրբ Գրքում ասված է, որ Տերը խոսում է Մովսես մարգարեի հետ և ասում «վերցրու անուշահոտ համեմներ, 500 ընտիր ծաղիկներ, 250 սիկղ անուշաբույր ծաղիկներ, 250 սիկղ խնկեղեգ, 500սիկղ ձեթ, պատրաստիր յուղ: Այն Սուրբ օծության համար յուղ թող լինի» /Ելից գրքից/:

Այս ավանդությունը փոխանցվել է ս.Գրիգոր Լուսավորչին: Եպիսկոպոսների և վարդապետների շարականների երգեցողության ներքո 46 տեսակի անուշաբույր բույսերից և ձիթապտղի յուղից պատրաստվում և է ս.Մյուռոնը և օրհնում:

Ահա նման սուրբ առիթի ականատեսը եղանք մենք երբ հոգևոր հանդիսավոր երգեցողության ներքո պատրաստվեց հրաշագործ հեղուկն ու օրհնվեց Սրբազան Ներսես Պետրոս 19-րդ Վեհափառի կողմից: Աննկարագրելի էին զգացումներս և խոսքերս չեն բավականացնում փոխանցել տպավորություններս, գիտեմ միայն, որ հոգևոր մեծ սնունդ և հանգստություն ստացանք:

Ելենա Սիմոնյան

Ն Ո Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

Նախորդ շաբաթվա ընթացքում մեր համայնքում տեղի ունեցան հետևյալ իրադարձությունները:

- **Պսակադրություն**
  Մանվել և Հռիփսիմե Պետրոսյաններ՝ քաղաք Մոսկվա:
- **Մկրտություն և կնունք**
  - Աննա Մաթևոսյան՝ քաղաք Իրկուտսկ:

Շնորհավորում ենք մեր հայրենակիցներին իրենց կյանքում տեղի ունեցած երջանիկ իրադարձության կապակցությամբ:

ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Տեղեկացնում ենք, որ Մեր եկեղեցին նվիրատվություն է ստացել Մանվել և Հռիփսիմե Պետրոսյանների պսակադրության և Աննա Մաթևոսյանի մկրտության առիթներով նշյալներիս ընտանիքների կողմից համապատասխանաբար 5000 /հինգ հազար/ և 10000 /տասը հազար/ ռուբլի գումարի տեսքով:

Մեր երախտագիտությունն ենք հայտնում բարերարներին իրենց աստվածահաճո գործունեության համար և հաջողություններ մաղթում բոլոր ձեռնարկներում:

Հասցե Москва ул. Малая Грузинская 19/2
Հեռախոս
1. 8-499-1309993 (Հ.Գևորգ Վարդապետ Նորատունկյան)
2. 7-926-9049149 (Հ.Պետրոս Վարդապետ Պետրոսյան)
Ֆաքս 8-495-2522534 (Ext. 119)
E-mail
noradounguian@hotmail.com,
ppetros@libero.it
moscow@armeniancatholic.ru
Web site
www. armeniancatholic.ru